ՍԻՄԵՈՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՐԵՎԱՆՑԻ

ՔԱՐՈԶ՝ ՔՐԻՍՏՈՍԻ ՔԱՌԱՍՆԵՐՈՐԴ ՕՐԸ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՏԱՃԱՐ ԳԱԼՈՒ ՄԱՍԻՆ

«Երբ նրա սրբագործման օրերը լրացան, նրան տարան Երուսաղեմ՝ Տիրոջը ներկայացնելու համար»/Ղուկ. Բ 22 /:

Աստծու հրամանով Մովսեսն Իսրայելին օրենք տվեց, թե՝ «Երբ կինը ծնում է, պետք է տանը յոթ օր նստի, ոչ մի մաքուր բանի ձեռք չտա, իսկ յոթ օր հետո զոհերով պիտի գնա սրբարան և քահանայի ձեռքով մաքրվի»/հմմտ. Ղևտ. ԺԲ/: Այն պատճառով է, որ մահացածների դին անմաքուր է համարվում, և, համաձայն նրանց օրենքի, որ երբ դիպչում էին մեռածների մարմնին, ժողովրդից դուրս էին մնում մեկ օր՝ չմոտենալով սրբարանին: Մահացած մանկան մարմինը յոթ օր պահվում էր մոր մոտ: Հաստատվեց նաև այն, թե յոթ օր պիտի պահվի, հետո՝ մաքրվի: Ուրեմն Քրիստոս և/Ի/մայր Մարիամը թեև անմեղ էին և կարիք չունեին օրենքի/հղանալը, հոգևորվելը և աստվածանալը համաժամանակ էր, քանի որ հղությունը անսերմ էր և անապական, իսկ հղացումը իսկապես կենդանություն/: /Քրիստոս/չէր եկել խափանելու/օրենքը/, այլ լրացնելու: Այն իրագործեց՝ վերցնելով օրենքի ծանրությունը, որ տվեց թերիներին և այն կատարողներին: Ապա ասաց. «Եկե՛ք ինձ մոտ բոլոր կարոտյալներդ..., քաղցր է լուծն իմ»/հմմտ. Մատթ. ԺԱ 28-30/: Ինչպես ասում Պողոսի՝ «Ինչ որ անեծար էր օրենքին, որ/մարմնի պատճառով/ տկարանում էր, Աստված/հնարավոր դարձրեց/՝ առաքելով Իր Որդուն» /Հռոմ. Ը 3/: Մտավ օրենքի մեջ, որպեսզի արդարացվեն նրանք, ովքեր օրենքի տակ են: Եվ սրա համար հանձն առավ տանար գնալ՝ իր հաստատած օրենքն իրականացնելու: Այնուհետև կատարվելու է այն օրենքը, թե՝ «Ամեն արու զավակ, որ արգանդ է բացում, /Տիրոջ համար/ սուրբ պիտի կոչվի» /Ղուկ. Բ 23/: Իսկ եգիպտոսում, երբ Աստված զոհեց եգիպտացիների անդրանիկներին և խնամեց իսրայելացիներին, օրենք հաստատեց, թե՝ «Իսրայելի բոլոր անդրանիկ զավակներին՝ մարդ թե անասուն, ինձ նվիրաբերիր, որովհետև իմն են» /Ելք. ԺԲ 2/: Եթե Քրիստոս ժամանակավոր մոր և հավիտենականության մեջ Հոր անդրանիկ զավակն էր, ապա եկավ տանար Հայր Աստծուն նվիրաբերվելու, որպեսզի այդ օրենքը ևս իրագործվի:

Ապա հաշտության և խաղաղության միջնորդ էր լինելու Հայր Աստծու և մարդու միջև, ուստի մեր/մարդկային/ բնությունից իրրև անարատ ընծա նվիրաբերվեց Հորը, որպեսզի մեզ հետ հաշտեցնի, և ինքն իրրև գլուխ՝ ինքն իրեն, և մեզ, որպես իր անդամները, պիտի ընծայի Հորը: Ըստ այնմ, թե մտավ աննյութեղեն օրենքով: Մարդկության կողմից ընծայվեց որպես մարդ, իսկ Աստծու կողմից՝ Աստված: Այնուհետև եզեկիելի մարգարեությունը պիտի

կատարվի՝ բացելով տաճարի փակված դուռը, որը մարդուն նշան էր երկնքից, և որը բացվեց Քրիստոսով: Դրա համար ասում է. «Նրա սրբագործման օրերը լրացան»/Ղուկ. Բ 22/: Ուրեմն, մենք ամեն տարի այս օրը փառավորում, օրհնում և տոնում ենք Քրիստոսի գալուստը տաճար, քանի որ մեզ համար բարերարություններ և օգտակարություններ արեց: Ազատեց օրենքի ծանրությունից և տկարությունից՝ կոչելով այն կատարյալ ու թեթև օրենք: Որպես բարձրյալ և անդրանիկ զավակ՝ մեզ ընծայեց Հայր Աստծուն և հաշտեցրեց նրա հետ: Բացեց երկնքի դուռը, որ փակված էր մեր առաջ, և հրավիրեց մեզ այնտեղ: Բայց այս հին մովսեսադիր տոնը հուչակվեց կենդանիների պատարագ, ըստ այնմ՝ «Տալ զույգ տատրակներն իրրև զոհ, կամ աղավնու երկու ձագեր»/Ղուկ. Բ 24/: Առանց երի լույս է նիշվում, ըստ այն/խոսքի/՝ «Որպես լույս հայտնվեցիր հեթանոսների մեջ»: Բոլորը ջահերով և մոմերով դուրս էին գալիս դիմավորելու: Բայց մեր քրիստոսադիր տոնը այդպիսի անբան զոհերի փոխարեն հանդիսավոր հրավառություն ունի : Որի պատճառն այն է, ինչպես ասացինք, «Քրիստոս եկավ թերի մնացած օրենքը լրացնելու»/Մատթ. Ե 17/: Իսկ մեր այս նոր տոնը այն կենդանական, անբանական և անկատար զոհը փոխարինեց նշմարիտ Աստվածային և կատարյալ պատարագով: Մեծ հրավառություն է լույսը, ըստ Տիրոջ /խոսքի/՝ «Եկա երկրի վրա կրակ գցելու»/Ղուկ. ԺԲ 49/, քանի որ կրակն ունի լույս և հուր: Այսպես Քրիստոս և՛ լույս է, և՛ հուր: Արժանիներին լույս և կյանք է, իսկ անարժաններին՝ հուր և տանջանք: Որի համար և մեզ կրակն ավանդվեց, որովհետև երկուսն էլ հաստատվելու են: Այս տոնի օրը կրակը երկու մասի է բաժանվելու, լույսն առանց այրելու, և կրակի բոցն առանց լույսի: Լույսն արդարների համար է, իսկ այրող բոցը, որը սոսկ կրակ է՝ մեղավորների: Ըստ այնմ Տիրոջ ծայրը կրակի մեջ բաժանում է բոցը:

Ուրեմն և մենք այս տոնին անասուններին զոհելու փոխարեն նշմարիտ և անարատ Քրիստոսի պատարագն ենք մատուցում և, որպես միջնորդ ունենալով Մարիամի անբիծ տատրակը՝ լույսը ծեռքում և կրակը առջևում, մոտենում ենք երկնավոր Հորը և խնդրում, որպեսզի փրկի կրակից և լույսին արժանացնի: Հրաշափառ այս տոնին հիշատակվում է նաև երանելի Սիմեոն ծերունին, ինչպես Ավետարանն է ասում. «Մի մարդ կար Երուսաղեմում, որի անունն էր Սիմեոն, որն արդար էր և Աստվածավախ»/Ղուկ. Բ 25/:

Առաքյալների և մարգարեների խոսքն Աստծու խոսքն էր, ինչպես Աստվածաշունչն է ասում՝ «Խոսում էին Աստծուց ստացած և Նրանից ներշնչված»: Ըստ Պողոսի՝ «Մեր խոսքը մարդու խոսք չէ, այլ նշմարիտ Աստծու խոսք»: Դրա համար նրանից գովաբանվածը Աստծուց է, ինչպես ասում է. «Այրն արդար էր....», և այլն: Թեպետ Ադամից հետո եղան արդարներ, ինչպես Նոյը, Աբրահամը և այլն, որոնք Սուրբ Հոգու ազդեցությամբ իմանալով Քրիստոսի գալուստը և նրա փրկությունը՝ փափագում էին տեսնել, բայց չկարողացան տեսնել, ըստ այն խոսքի, թե՝ «Քեզ են սպասում արդարները»: Իսկ սա/Սիմեոնը/ցանկացավ տեսնել և տեսավ, ըստ այնմ, թե՝ «Տեսան իմ աչքերը քո փրկությունը»/Ղուկ. Բ 30/: Նույն Հոգին, որ նրանց մտքի վրա էր ազդում, բնակված էր նրա /Սիմեոնի/ մեջ, ըստ այնմ, «Հոգին սուրբ էր նրա մեջ»/Ղուկ. Բ 25/: Այս Հոգին, որ Քրիստոսի գալուց առաջ միայն մխիթարիչ էր համարվում, խոստացավ Սիմեոնին, թե՝ «Մահ չես տեսնի, մինչև տեսնես նրան»/Ղուկ. Բ 26/, /ասում է, հրաման էր ստացել Սուրբ

Հոգուց/: Հասնելով Եռայիի այն խոսքին, թե՝ «Ահա կույսը կհղիանա և որդի կծնի», սրտի խորքից հառաչանքով ասում է. «Երանի՜ այն ժամանակին, երբ այս կլինի, և երանի՜ այն աչքերին, որ տեսնելու են»:

Այսօր քառասնօրյա կուսածին մանուկ Հիսուս եկավ տաճար: Հոգին ավետում էր նրան /Սիմեոնին/, թե արի՛ և տե՛ս քո փափագածին: Ինչպես որ Գիրքն է ասում. «Հոգով տաճար եկավ»/Ղուկ. Բ 27/:

Նոյը ևս արդար էր, ըստ այն խոսքի, որ վկայեց Աստված, թե՝ «Մարդկային ցեղի մեջ միայն քե՛զ գտա արդար իմ հանդեպ»/Մնդ. է 1/: Նա կամեցավ տեսնել այս օրը և այս փրկությունը, բայց չտեսավ, ըստ այն խոսքի, թե՝ «Շատ մարգարեներ և արդարներ կամեցան տեսնել և չտեսան»: Այլ միայն դրա նշանը ամպի մեջ երևացող աղեղն էր: Նոյը կոչվեց երանելի, որովհետև մահվամբ հանգստացրեց նրանց, ովքեր իր ժամանակում էին: Նա եղավ երանելի կենդանիների և մեռելների մեջ՝ ավետարանելով փրկություն և երանություն, համածայն այն խոսքի, թե՝ «Ուրեմն արձակի՛ր», այսինքն՝ մարդկային ազգի երկմտության կապը ճանդի՛ր և ստեղծի՛ր/քո/ փրկությունը, քանի որ «Տեսան իմ աչքերը քեզ՝ Փրկչիդ»: Նա տեսավ աղեղն ամպի մեջ, սա իր գրկում ընդունեց Փրկչին: Նոյն աշխարհի նախահայրն էր՝ ըստ մարմնի, իսկ սա՝ ըստ հոգևոր հավատքի ընդլայնման: Աստված իր ժամանակում փրկեց Նոյին և բաժանեց նրան ազգերից՝ համածայն Իր բարկության խոսքի, իսկ Սիմեոնին բաժանեց ժամանակից և ազգերից՝ համածայն իր փրկության խոսքի. «Իմ աչքերը տեսան քո փրկությունը»:

Աբրահամը ևս արդար էր: Իսկ Աստված փառավորելու համար Աբրահամից մեծը չգտավ: Նա պահեց Աստծու օրենքը և Աստծուն բարեկամ կոչվեց: Կամեցավ տեսնել այս փրկությունը, բայց միայն Իսահակի փրկության համար որպես նշան տեսավ խոյը ըստ այն խոսքի, թե՝ «Ձեր հայր Աբրահամը ցանկացավ տեսնել իմ /աշխարհ գալու/օրը, տեսավ և ուրախացավ»/Հովհ. Ը 56/: Նա էր ճշմարիտ Փրկիչն աշխարհի: Նա ընդունեց իր վրանում, սա՝ իր գրկում: Նրա ավետիքն Իսահակի համար էր, սրանը՝ ողջ սերունդների:

Մովսեսը ևս արդար էր: Նա փարավոնի Աստված անվանվեց այնքան /ժամանակ/, մինչև որ Աստծու հրամանատուն եղավ, ըստ այնմ, թե՝ «Թո՛ւլ տուր, որպեսզի ինչքեմ այնտեղ»: Նաև՝ «Իմ ծառա Մովսեսը հեզ է»: Նա ցանկացավ տեսնել՝ ըստ այս խոսքի. «Քո երեսը ցո՛ւյց տուր ինձ»: Իսկ նրան ասաց, «Իմ երեսը ոչ մեկը չի կարող տեսնել»: Սիմեոնը եղավ ականատես, գրկեց ու փրկվեց հոգևոր մահից:

Դավիթը ևս արդար էր. «Ըստ իմ սրտի գտա Դավթին, որ կատարելու էր իմ ողջ կամքը»: Նա կամեցավ տեսնել այս փրկությունը, ըստ այնմ, թե՝ «Աստված, իմ անձը ծարավի է քեզ, երբ գաս, երևալու եմ քեզ»: Կամեցող Աստված եկավ Սիմեոնի մոտ և բազմեց նրա գրկում:

Հովհաննես/Մկրտիչը/ ևս արդար էր, քանի որ արժանի եղավ մկրտելու Տիրոջը: Նա ճանաչեց, տեսավ և վկայեց, թե՝ «Ահա Քրիստոս՝ Գառն Աստծու»/Հովհ. Ա 1/: Բայց նա Քրիստոսից առաջ չէր, այլ /Քրիստոսին/ ժամանակակից, և չվկայեց, մինչև ընդունեց երկնքից վկայություն, ըստ այն խոսքի՝ «Որն ուղարկեց ինձ մկրտելու, նա ասաց ինձ...»: Եվ վկայում էր ծածկաբար. «Այն, որ իմ ետևից է գալու...»: Եվ երաժարվում էր նրա գլխին ձեռքը դնելուց: Սիմեոնը ծեր էր, իսկ Քրիստոս՝ մանուկ: Դեռևս ոչ մեկից չէր վկայվել: Ինքը ծեր էր և մանուկից

փրկություն էր խնդրում, և համարձակությամբ քարոզում էր՝ նրան Տեր և Արձակիչ խոստովանելով:

Նրա մայր Մարիամը և հայր Հովսեփը ևս արդար էին, տեսան և ճանաչեցին նրան, բայց հետո ամենից առաջ Սիմեոնը հայտնեց նրա Աստվածությունը: Ավետարանն ասում է, թե՝ «Նրա ծնողները զարմացել էին»/Ղուկ. Բ 33/: Նա/Սիմեոնը/օրհնեց նրա հորն ու մորը և իրեն՝ ըստ Ավետարանի: Այս Սիմեոնը սերովբեներից ավելի վեհագույն գտնվեց, որովհետև նրանք թևաստղյալ ծածկեցին իրենց երեսները, իսկ նա գրկեց և օրհնեց մանկան պես: Նա ավետարանեց կենդանիներին և մեռելներին՝ լինելով ավետարանիչների առաջ: Դրա համար ասում է. «Ուրեմն արձակի՛ր», այսինքն՝ տեսա, հավատացի և քարոզեցի ողջերին: «Ուրեմն արձակի՛ր և հրաման տուր, որպեսզի գնալով մեռելներին ևս քարոզեմ և ավետարանեմ: Արձակի՛ր, ով Դու կապող Տեր, ահա տեսա ինչպես կապեցիր, նույնպես և արձակիր, քանի որ քեզ էի սպասում»: Դրա համար է ասում. «Սիմեոնը մի մարդ էր»: Նա հատուկ էր և նմանը չունեցող: Բոլորը զարմացել էին նրա վրա, քանի որ գալիս-անցնում էր մահը, բայց նրան չէր մոտենում: Մեռնում էին որդիներն ու թոռները, իսկ նա կենդանի էր: Սա նշան էր այն բանի, թե՝ «Ով բարձրացներ, նա էր հաստատողը»: Կնքված գիրք էր, ըստ տեսիլքի, թե՝ «Ով բացեր, նրանն էր /լինելու/թագավորությունը»:

Գրաբարից թարգմանությունը՝

ՀՐԱՆՏ ՍԱՐԿԱՎԱԳ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ